



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.715
U-38

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԲՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ
7/31-1922
ՎՅԵՆԱ, ԿՅՈՒՆԻ
Ս. ՄՅԱՍՆԻՅԱՆԻ

Մ. ՍԵՄԵՆԿՈ

ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ

ՉՐՈՅՑ

ՊԵՏԵՐԱԶԱՐԿ

Փոխադրեց

ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑ



ԹԻՖԼԻՉ, 1905

ԱՐԱԳԱՏԻՊ ՏՊ. ՄՆ. ՄԻԿՏԻՐՈՍԵԱՆՑԻ

Գուշկինսան փողոց, № 12.



ՄԱՆԿԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

30 MAY 2011

Մ. ՍԵՄԵՆԿԱ

8891.715
U-38 *ար.*

ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ

ՉՐՈՅՑ

ՊԵՏԵՐԵՋԵՐԳ

1002
6906

ՄԱՆՎԱՐՆ ԳՐԱԳԱՐՆ

Փոխադրեց

ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԿԱՄԵԱՆՑ



ԹԻՖԼԻՉ, 1904

ԱՐԱԿԱՏԻՊ ՏԳ. ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
Գուշկինեան փողոց, № 12.

30.07.2013

3040

ՄԱՏՍԱԻ ԿԻՋԱՌԱ

ՄԱՏՍԱԻ ԿԻՋԱՌԱ

Дозволено цензурою. Тифлисъ, 5 Юня 1904 г.



ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ

Ա



Չմռան ցուրտ ու կարճ օրը մըթ-
նանալու վրայ էր:

Փոքրիկ Հռիփսոն լուսամտի տախտա-
կին ծաղկատակ նստած՝ շտապ-շտապ կա-
րում էր երեկուան սկսած օձիքը:

Աղջկայ նիհար, փոքրիկ մարմինը բոլո-
րովին կծկուել-կպել էր լուսամտին, որի
առաջ նստած էր նրա մայրը, որ նոյնպէս
շտապում էր ձեռքի կարը վերջացնել:

Հռիփսօն ժամանակ-առժամանակ բար-
ձրացնում էր գլուխը, որդիական սիրով լի
խոշոր, սևորակ աչերը յառում իր սիրե-
լի մայրիկին և էլի կրկին առջևը դրած
նկարը դիտում ուշադրութեամբ, որպէսզի
ամենայն ճշտութեամբ ընդօրինակէ կտաւի
վրայ...:

«Մէկ, երկու, երեք...: էլի երեք աչք է
մնացել կարելու, որ բոլորովին վերջացնեմ»,
կամաց շնչում է Հռիփսօն, փոքրիկ թա-
թիկներով ետ տանում լայն ու շարմազ ճա-
կատից մուգ-շագանակագոյն սիրուն խոպուպ-
ները և առաջուանից էլ աւելի եռանդով
սկսում մնացած աչքերը դուրս բերել կտա-
ւի վրայ:

— Բաւական է, Հռիփսօ-ջան, արդէն
մութն է, — գորովանքով դիմում է մայրն
աղջկան:

— Իսկոյն, իսկոյն, մայրիկ-ջան:

— Համարեա պրծել ես, հոգիս, քչի հա-
մար ինչո՞ւ ես իդուր տեղը աչքերդ փշացնում:
Ամբողջ երկու օր է ինչ դու գլուխդ կախ
զցած, առանց դադարի, եռանդով կարում
ես: Հերիք է, մատաղդ իմ, հերիք է...: Թո՛ղ,
ասում եմ: Հիմա էլ գնա՛, միքիչ խնայ: Տես

թէ տիկնիկներդ ինչպէս են տխրել մենակ
մնալուց. մինչև անգամ բակն էլ է տխուր
առանց քեզ...: Աղջի, քեզ հետ չե՛մ. թո՛ղ,
վեր կաց-դուրս արի: Գնա՛, մի լաւ վազվզի՛ր,
մաքուր օդ ծծիր:

— Ո՛չ, ո՛չ, մայրիկ-ջան. թո՛ղ միքիչ էլ
նստեմ...: Այ, տես, միայն երկու աչք է
մնացել: Քանի դեռ լոյս է, թո՛ղ բոլորը
պրծնեմ: Եթէ չվերջացնեմ, լաւ չի լինիլ, է՛.
ախր մենք ո՛չ մոմ ունինք, ո՛չ նաւթ:

— Ուրեմն էլ ինչո՞ւ ես աչքերդ փշացնում.
աւելի լաւ չէ՞ դնաս նաւթ բերես մանրա-
վաճառից:

— Այն էլ առանց փողի, հա՛...: Ո՛չ, մայ-
րիկ-ջան, չեմ կարող:

— Բայց մենք հաց ու թէյ էլ չունենք.
եթէ գնաս, նաւթի հետ դրանք էլ կը բերես:

— Ո՛չ, — գլուխը բացասական կերպով
շարժում է Հռիփսօն. — աւելի լաւ է իսկի
չասես: Երեկուայ բերածս ձաւարը համարեա
զօռով ստացայ. չէր տալիս: «Մինչև հին
պարտքը չտաք, ասաց, վերջին տարածների
հաշիւը չմաքրէք, այլևս նոր ապառիկ չեմ
տալ», և ասաց այնպէս ժանգոտ կերպով,
որ վախենում եմ նորից գնալ:

—Բայց եթէ նաւթ լինէր, ես ձեռքիս կարը շուտ կ'աւարտէի. ստացածս փողով կարող էինք նրա պարտքը տալ:

—Այո, կանրեղ էինք,—տարակուսանքով



Հռիփսոն կարում է օձիքը:

ձայնը երկարացրեց Հռիփսոն:—Իսկ եթէ աշխատանքիդ համար անմիջապէս շտանառ, յետոյ: Մէկ էլ տեսար ասացին՝ «տանը չէ. թողէք մնայ, վաղը կը գաք-կըստանաք»: 2^Ը որ շատ անգամ է այդպէս եղել: Ուրեմն էլի ամենից լաւն այն է, որ ձեռքիս օձիքը շուտ

վերջացնեմ, որպէսզի վաղը կարողանամ ծախել և ստացածս փողով առնել՝ ինչ-որ անհրաժեշտ է առայժմ մեզ համար:

Մայրը այլևս ոչինչ չասաց: Նա իր աղջրկան լաւ էր ճանաչում. փորձով գիտէր, որ պնդելն իզուր է:

Հռիփսոն իր մօր մինուճարն էր, նրա միակ մտերմութիւնն և թէ բարեկամութիւնն, որի հետ բաժանում էր հէք մայրը իր վիշտն ու ուրախութիւնը:

Հռիփսոն ութ տարին նոր էր լրացել, այժմ ոտքը իննի մէջն էր: Սակայն չնայելով այդպէս փոքրահասակ լինելուն, տան մէջ լիակատար անտեսութիւն անողն ու կարգադրողը նա էր: Տնարար լաւ հարսի նման պտպտալէ ամեն բան շինում էր—մաքրում, լուանում, արգուկում, եփում-թափում. բայց որ ամենալաւն է՝ գործ շինելիս շարունակ ուրախ ու զուարթ էր լինում, երգում էր և այնպէս սրտանց ու հաւէսով էր աշխատում, որ գործի ծանրութիւնը համարեա անզգալի էր դառնում:

Միակ բանը՝ որ նրա համար թէ ծանր էր և թէ շատ անտանելի, այդ խանութ գրնալ և պարտքով բան բերելն էր: Չատ ան-

գամ մօր սէրն էլ չէր օգնում նրան համոզելու այդ բանի համար: Պատահում էր, որ մայր ու աղջիկ երկու օրով մնում էին քաղցած՝ առանց մի պատառ հաց բերանները դնելու: Եւ երբ քաղցը շատ էր տանջում երկուսին էլ, երբ այլևս յոյս չէր մնում, թէ գոնէ վաղը կամ միւս օրը կարող էին իրանց քաղցն անցկացնել, ահա միայն այդժամանակ նա յանձն էր առնում գնալ, այն էլ մեծ դժուարութեամբ, այն էլ մօր երկար աղաչանք-պաղատանքից յետոյ:

Յօնքերը կիտած, պառաւի նման քթի տակին փնթփնթալով վեր էր կենում տեղից, կիսամաշ փոքրիկ թաշկինակը գցում զլիսին և արագութեամբ դուրս գալիս տանից, բայց անվստահ քայլերով գնում զէպի խանութ:

Հասնելով խանութ, նա կանգ էր առնում զազգեանի առաջ և տարակուսական ու անվստահ հայեացքով նայում խանութպանին:

— Ի՞նչ ես ուզում, — հարցնում է խանութպանը:

— Հինգ գրուանքայ հաց, — հազիւ լսելի ձայնով պատասխանում է Հռիփսօն:

Խանութպանը լուռ կշռում է հացը:

— Ուրի՞շ:

— Վեց մսխալ թէյ:

Մյո՞ւ էլ է կշռվում:

— Ուրի՞շ ի՞նչ:

— Մի քառօրդ գրուանքայ շաքար ու մի գրուանքայ էլ նաւթ:

Խանութպանը թէև նրա այդ ուղածներն էլ է կատարում, բայց անխղճաբար ջոկջոկատում — ընտրում է ու վատ կտորներից կշռում և պղտոր նաւթից չափում:

— Ախ, քիչ մնաց մոռանայի. խնդրեմ մի քառօրդ գրուանքայ էլ իւղ տաք:

Իւղն էլ է կշռվում:

— Էլ ուրի՞շ ի՞նչ, — կրկին հարցնում է խանութպանը:

— Ուրի՞շ ոչինչ: Գրեցէք խնդրեմ ձեր հաշուեգրքում, — ասում է խեղճ երեխան, բայց այս անգամ բոլորովին ցածր ձայնով և զրնաժները զոդզոդալով տեղաւորում անձեռոցիկի մէջ:

— Էլի առանց փողի...: Անցեալ անգամ քեզ շատացի՞, որ այլևս ապառիկ ոչինչ չեմ տալ, մինչև հին պարտքներդ շտաք-պրծնէք, — նկատում է խանութպանը:

Խեղճ երեխան թէև ամօթից կարմրել

էր, բայց լուռ շարունակում էր գնած բաները տեղաւորել:

—Ի՞նչ ես սուս կացել. ինչո՞ւ չես պատասխանում...: Փողը ե՞րբ ես բերելու:

—Վաղը չէ, միւս օրը...: Մայրիկս ձեռքին կար ունի, որ վաղը պատրաստ կը լինի: Փողն ստանալուն պէս իսկոյն կը բերեմ:

—Հա՛... «կը բերեմ»...: Ի՞նչ խորամանկն է. դեռ ուզելիքները կշռել է տալիս-պըծնում և յետոյ ասում՝ գրեցէք: Բայց դեռ առաջ հարցրո՞ւ, թէ ապագիկ կը տան էլի և ապա թէ կշռել տուր:

Հռիփսօն ամօթից աւելի շառագունեց—
զիլ-կարմիր խնձոր դարձաւ: Խեղճ աղջիկը երկիւղ կրելով թէ մերժումն կըստանայ, ճարհատեալ դեռ ուզածները կշռել տուաւ և ապա թէ յայտնեց որ փող չունի:

—Ասա՛ մայրիկիդ, — անբաւական ձայնով ասում է խանութպանը, — որ անպատճառ փողն ուզարկէ: Այսօր վերջին անգամն եմ տալիս, այ. հէնց այդպէս էլ կ'ասես:

—Լա՛ւ, կ'ասեմ, — պատասխանում է Հռիփսօն՝ այս անգամ աւելի համարձակ, զլխի թաշկինակի ծայրերը հուպ տալիս կզակի տակին, որ քամին չփախցնի, շտապով վեր-

ցնում է կապոցն ու խանութից դուրս գալիս, աւելի ուղիղը՝ դուրս թուշում ու մի շնչում հասնում տուն:

Այդ տխուր պատկերները այսօր աւելի կենդանի գոյներով նկարուեցին նրա աչքի առաջ, երբ նա լուսամտի տախտակին ծալպատակ նստած՝ նկարից մնացած վերջին աչքերն էր ընդօրինակում:

Եւ հէնց այդ պատճառով էր նա այդպէս եռանդով աշխատում օձիքը վերջացնելու, որպէսզի կարողանայ մի ելք գտնել՝ այդ դժուար կացութիւնից դուրս գալու:

Թէպէտ ազատ ծիտիկի նման Հռիփսօն էլ էր ուզում բախում վազվզել, թռչկոտալ, բայց մի անգամ դրած վճռին հաստատ մընաց: Ամբողջ երկու օր համարեա չհեռացաւ գործից, այլ եռանդով ու սրտանց աշխատեց, որ նպատակին հասնի:

«Վաղը շուկայ կը տանեմ օձիքը և կը ծախեմ: Այս կը լինի իմ առաջին վաստակս», ինքնիրան մտմտում էր Հռիփսօն և աւելի աշխոյժով ու կրկնապատիկ եռանդով շարունակում գործը:





Բ

Մայրիկ-ջան, պրծա՛յ,—ուրախ ու գոհ սրտով բացականչեց Հռիփսոն, ցուփ-ցուփ թռաւ ներքև և կանգնեց մօր մօտ, որ մայրական խանդաղատանքով ժպտաց իր գաւակի անմեղ ուրախութեան վրայ:

Մեծ յաղթանակ տարած մարդու նման Հռիփսոն սկսեց պատրաստի օձիքը շարժել օղում ու հրճուանքով ասել.

—Տեսնո՞ւմ ես, մայրիկ-ջան...: Տեսա՞ր որ վերջացրի:

Յետոյ նա մեծ խնամքով ծալեց օձիքը, դրաւ պահարանի մէջ ու զնաց-մտաւ իրանց խոնաւ ու մութ խոհանոցը:

Հռիփսոն դեռ առաւօտուանից մի գաւաթի մէջ ջուր էր ածել և երեկուանից մը-

նացած հացի կտորտանքը գցել մէջը, որ փափկեն:

Նա իր բոլոր յոյսը այդ ընթրիքի վրայ էր դրել:

«Այս փոքրիկ կտորը ես կ'ուտեմ», ասում է ինքնիրան Հռիփսոն և մեծ ախորժակով



Հռիփսոն ջուրը քամում է գաւաթից:

ծամում փափկած շոր հացի կտորը, ապա ջուրը քամում գաւաթից ու բռի մէջ հաւաքում միւս կտորները:

«Այս մեծ կտորը կը տանեմ մայրիկիս.

նա էլ է քաղցած ինձ պէս...: Սակայն վազը... հիանալի, հիանալի կերպով պէտք է հիւրասիրեմ մայրիկիս: Օձիքը ծախելուս պէս կ'երթամ խանութ ու՝ հաց, թէյ, շաքար կ'առնեմ վճարով: Հն, մոռացայ. իւր էլ ումի ուրիշ համով բան էլ»:

Եւ նա ուրախ դէմքով վազեց մօր մօտ, ձախ թևիկը պատ տուաւ նրա վզովը, իսկ աջով մօր բերանը դրաւ փափկած հացի մի կտոր, քահ-քահ ծիծաղեց ու դուրս թռազնաց բակը:

Հռիփսօն բակի մէջտեղը կանգ առաւ և մեծ հաճութեամբ ներս շնչեց թարմ օդը: Սակայն նրա սիրած տեղն այդ չէր, այլ բակի հարաւային կողմում եղած ու աչքաթող արուած փայտարանը, ուր մեն-ու-մենակ տիկնի էր տալիս:

Նրա ունեցած-չունեցածը երկու հատ տիկնիկ էր, որոնց շորերը ինքն էր կարել զանազան հինումին կտորտանքներից և հրնար եղածին չափ զուքել-զարդարել նրանց վրան-գլուխը:

Բակը շատ խոնաւ էր:

Խեղճ երեխան ձեռքերը շփելով, ինքնիրան թափահարելով ու քոցին-քոցին անե-

լով միքանի անգամ արագ-արագ անցուղարձ արաւ, որ միքիշ տաքանան տոտիկները: Բայց ստնամանները բարակ տակով կիսակօշիկներ էին, ուստի գետնի թացութիւնից աւելի ևս սառան խեղճի ոտները: Հէք երեխան սկսեց ցրտից դողդողալ:

«Չէ, շատ ցուրտ է. այսօր ոչ կարելի է վազվզել և ոչ էլ տիկնի-տալ...: Լաւն այն է գնամ տուն պառկեմ, մանաւանդ որ վաղը շուկայի օր է, առաւօտեան շատ վաղ պէտք է վեր կենամ, որ օձիքը տանեմ-ծախեմ»:

Ինքն իր հետ այդպէս խօսելով՝ նա քայլերն ուղղեց դէպի տուն:

Մէկ-էլ յանկարծ կատուի նուազած ու խղճալի մլաւոց լսուեց: Հռիփսօն կանգ առաւ և ուշադրութեամբ ականջ դրաւ:

Խեղճ երեխան ընկեր շունենալով, շներն ու կատուները նրա համար ընկերների տեղ էին բռնում:

«Միա՞ւ», նորից լսուեց:

«Այս կատուի մլաւոց է, սակայն ո՞րտեղ է կատուն»:

«Միա՞ւ», նորից լսուեց աւելի մօտիկից:

«Ախ, Տէր Աստուած, ախր որտեղ է, է»:

Եւ նա սկսեց որոնել, ամեն մի առարկայի ետև ուշադրութեամբ նայել:

Ազբի մեծ քթոցի մօտ երկար-ու-մէկ ձգուած էր մի մոխրագոյն կատու՝ նիհար, ներս ընկած կողերով ու ճպոտտած աչքերով:

Կատուն հէնց որ փոքրիկ աղջկան տեսաւ, ուղեց էլի մլաւել, բայց ոյժ չունենալով՝ չկարողացաւ, այլ միայն բերանը բացու-խուփ արաւ:

— Խեղճ անասուն, ինչ օրն ես ընկել...: Ի՛նչպէս էլ նիհար ես. կողերիդ ոսկորները համարվում են,—ասաց Հռիփսօսն և խղճահարուած՝ խոնարհուեց նրա վրայ:— Դու հազիւ ես շնչում...: Երևի շատ ես սոված, երևի քաղցից ես այդպէս տանջվում: Բայց ես ի՛նչ ունեմ, որ ի՛նչ տամ քեզ, քանի որ ինքս էլ եմ քաղցած...: Դու շատ լաւ կ'անես, եթէ գնաս մեր տանտիրանց խոհանոցը, ուր քեզ համար ուտելիք կը լինի անշուշտ. թէ չէ՛ մենք ոչինչ չունենք: Երեկուանից սկսած՝ բացի մի պստիկ կտոր թրջած չոր հացից ուրիշ բան չեմ գրել բերանս և ոչ էլ մայրիկս է բան կերել... »:

Կատուն աչքերը բաց արաւ. դեռ ատամ-

ները երևացրեց և ապա կամաց ու երկար մլաւեց.

« Միառև... »:

« Ի՛նչ լաւ կը լինէր, եթէ կարողանայի սրան կերակրել... »: Կարելի է թէ առողջանար ու քէֆը տեղը գար...: Ախ, ի՛նչպէս լաւ կը լինէր. այն-ժամանակ մենք կը խաղայինք իրար հետ...: Փի՛սօ, փի՛սօ, փի՛սիկօ...: Այո՛, դու քաղցած ես. դու ինձանից աւելի ես քաղցած: Այնպէս ես ուժասպառուել, որ ման-գալ անգամ չես կարողանում...: Դէ, լաւ, բան չկայ. էլի լաւն այն է՛ քաջ լինես, միքիչ էլ համբերես: Ճիշտ է, այսօր չեմ կարող քեզ բան ուտացնել, բայց վաղը անպատճառ կ'ուտացնեմ... ուղիղն եմ ասում...: Վրլի՛, ի՛նչպէս էլ ցուրտ է՛...: Քեզ համար հօ աւելի ցուրտ կը լինի, խեղճ փիսօ, եթէ այս գիշեր մնաս այստեղ: Արի քեզ տանեմ մեր մարագը. այնտեղ այնքան էլ ցուրտ չի լինիլ, ինչպէս այստեղ...: Հա՛, կ'ուզես... »:

Եւ նա իսկոյն վաղեց դէպի տուն՝ մարագի բանալին բերելու:

— Գառկիր-քնիր, Հռիփսիկ-ջան, ինչքան վազվզեցիր, բաւական է:




— Դեռ ո՛չ, մայրիկ-ջան. դռանը մի հի-
ւանդ կատու եմ գտել, պէտք է նրան տա-
նեմ-պառկացնեմ մարագում: Որովհետև եթէ
այս գիշեր մնայ դուրսը, խեղճ կենդանին
ցրտից կը փէտանայ, — շտապ-շտապ բլբլաց
Հռիփսոն և վազեց-գնաց, մարագի դուռը բաց
արաւ, յարզից, ծղնօտից ու այնտեղ թափ-
թփած հին-ու-մին կտորտանքներից փափուկ
տեղ պատրաստեց և կրկին վերադարձաւ
կատուի մօտ ու մնաց տարակուսած կանգ-
նած: Ի՞նչպէս տանէր կատուին. եթէ պոչից
բռնած քաշ տալով տանէր, խեղճ կենդա-
նուն շատ ցաւ կը պատճառէր. գրկել ևս չէր
կարող. կատուն բոլորովին ցեխաթաթախ
էր, շորերը կը կեղտաւէր, իսկ խեղճ աղջիկը
ուրիշն էլ չունէր, որ փոխէր: Ուրեմն ի՞նչ-
պէս անէր, որ աւելի յարմար լինէր թէ
իրան և թէ կատուի համար:

«Այ, ի՞նչ կ'անեմ, — մտքումն ասում է
Հռիփսոն. — մի անգամից չորս ոտիցն էլ կը-
բռնեմ ու այդպէս վերցրած՝ շտապով կը-
տանեմ»:

Եւ հէնց այդպէս էլ արաւ: Միայն տանե-
լիս շատ վախեցաւ, երբ կատուն ցեխաթա-
թախ գլուխը վայր թողեց ճապաղած — թու-

լացած ու շատ խղճալի ձայնով մլաւեց: Քիչ
մնաց՝ ձեռքից բաց թողնէր, բայց և այնպէս
իրան պահեց և քայլերն աւելի արագացրեց:
Նա միայն այն-ժամանակ ազատ շունչ քա-
շեց, երբ իր բեռը դրաւ առաջուց պատրաս-
տած տեղի վրայ:

«Այստեղ բացի տաք լինելուց, այլև ապա-
ստեղ չկայ»:



Հռիփսոն կատուին տանում է մարագը:

հով կը լինի քեզ համար, փխսօ. թէ չէ, եթէ
այնտեղ մնայիր ու դռնապահը բակն աւե-

լիս քեզ տեսնէր, դուրս կը շարտէր անպատ-
 ճառ: Ես նրան լաւ եմ ճանաչում. շատ ան-
 գուլթն է, քեզ շէր խնայիլ...: Վայ, վայ, վայ,
 վայ, վայ, ինչպէս քաղցած եմ...: Միրտս
 ճապարղում-խառնվում է...: Չէ, լաւն այն է,
 գնամ-պառկեմ, կարելի է այդպէս շատ էլ
 զգալի շլինի քաղցածութիւնս: Ուրեմն ցտե-
 սութիւն, փխօ: Քնձ եղիր. համբերիր մին-
 չև վաղը:



Գ



Առաւօտեան Հռիփսօին քաղցր քը-
 նից արթնացրեց մօր հազը: Նա իս-
 կոյն վեր թռաւ, տեղի մէջ նստեց ու մեծ
 դժուարութեամբ բանալով քնաթաթախ աշ-
 քերը, զիմեց մօրը.

— Մայրիկ-ջան, դու արդէն վեր ես կա-
 ցել: Փամբ քանիսն է. հօ չեմ ուշացել:

— Ո՛չ, հոգիս, չես ուշացել: Ես շատ վաղ
 եմ վեր կացել, համարեա գեռ նոր էր լու-
 սանում: Ի՛նչ անէի, երեկոյեան չկարողացայ
 երկար նստել. եթէ հիմա էլ վաղ չվերկե-
 նայի, գժուար թէ այսօր էլ վերջացնէի
 ձեռքիս կարը:

Հռիփսօն վերկացաւ-գնաց խոհանոց, չբփ-
չփալէ լուացուեց ու եկաւ:

—Ես գնում եմ, մայրիկ, շուտ կը վերա-
դառնամ:

—Ո՞ր ես գնում, հոգիս, այսպէս վաղ-
վաղ:

Մայրը չէր հաւատում Հռիփսօի մտա-
զրութեանը. նրա երեկուան ասածները կա-
տակի տեղ էր ընդունել:

—Գնում եմ վերին շուկան: Դու էլ ես
քո ձեռագործը այնտեղ տանում-վաճառում,
այնպէս չէ՞, մայրիկ...: Ե՛խ, քիչ էր մնում
մոռանայի խեղճ կատուին: Դեռ գնամ ակը
տամ—տեսնեմ ինչպէս է անցկացրել գիշերս:

Գնաց, բայց վերադարձաւ շատ տխուր.
որովհետև կատուի դրութիւնը լաւանալու
փոխարէն աւելի էր վատացել:

Հռիփսիկը պատրաստուեց գնալու:

Հագաւ կիսամաշ ու անաստառ վերար-
կուն, գլխին գցեց հին թաշկինակը, իսկ երբ
նայեց կօշիկներին, խեղճի սիրտը շատ կո-
տրուեց. ոտնամանները ձեռքից բոլորովին
գնացել—անպէտքացել էին համարեա:

—Ի՞նչ-ու-ինչ պէտք է առնես, հոգիս:
Կարածդ օձիքը քանխո՞ւսի ես ծախելու:

Քսանուհինգ կոպէկից պակաս չեմ տալ.
ախր ամեն բան պէտք է առնեմ:

—Բայց դու միքիչ թանգ ասա, որ
կարողանաս ուզածդ գնով ծախել, որովհե-
տև մարդիկ զարմանալի յիմար սովորու-
թիւն ունեն. ապրանքի տէրը եթէ նոյն-
իսկ իսկական գնից մի բան էլ պակաս պա-
հանջի, առնողները այդ ևս շատ կը համա-
րեն: Այդ վերին աստիճանի վատ սովորու-
թիւնը աւելի շատ է տարածուած մանա-
ւանդ շուկայում: Կարծես ոչ-որքի համար
ժամանակը զին չունի: Էլ չեն հասկանում,
որ անտեղի, աւելորդ սակարկութիւն անե-
լով՝ թէ՛ ծախողը և թէ՛ առնողը իզուր ժա-
մանակ են կորցնում: Բայց դու աւելի լաւ
կ'անես, եթէ գնաս միւս շուկան և այնտեղի
խանութպանների վրայ ծախես. աւելի շուտ
նրանք կ'առնեն, որովհետև իրանք էլ սպի-
տակեղէն ծախողներ են: Եթէ՛ ծախես, վե-
րադարձիդ նաւթ բերել չմոռանաս:

—Չեմ մոռանալ, մայրիկ-ջան:

—Հա՛, զգո՛յշ եղի՛ր. չար տղաներից հե-
ռու կաց: Նրանք կարող են քեզ ծեծել, կամ
օձիքը ձեռքիցդ կը խլեն:

—Կը խլեն... Ո՞նց չէ. ես էլ կը թողնեմ,

չէ, — ինքնավստահութեամբ պատասխանեց
Հռիփսոն ու գնաց:

Նա ուրախ-ուրախ առաջ էր գնում:

Մտքում կազմած ծրագիրներն իրագոր-
ծելու գոհունակութիւնից նրա սիրտը թրր-
թռում էր թռչնակի նման: Նա ինքնաբա-
ւականութեամբ մտածում էր մանաւանդ այն
մասին, որ ինքը բոլոր անհրաժեշտ առնե-
լիքները պէտք է ձեռք բերէր ոչ թէ ապա-
ւելի — պարտքով, այլ առձեռն դրամով և
այն էլ... սեպհական փողով, իր *առաջին*
պատասխով:

«Հացն արժի վեց կոպէկ, — մտքի մէջ
հաշվում էր նա, — շաքարն ութ. վեց և ութ,
կ'անի... տասնուչորս: Թէյը արժի հինգ կո-
պէկ. տասնուչորս և հինգ, կ'անի տասնուին-
ներ, այնպէս չէ... այո՛, տասնուիններ: Իւղն էլ
արժի վեց կոպէկ: Ուրեմն ընդամենը պէտք
է ծախսեմ... քսանուհինգ կոպէկ. այսինքն
բոլորը, ինչ-որ ստանալու եմ օձիքի հա-
մար: Ախ, հօտա նաւթը: Ես այդ բոլորովին
մոռացել եմ: Է՛հ, ինչ արած. գնելիքներիցս
մէկն ու մէկը չեմ առնիլ: Սակայն ո՞րը շառ-
նեմ, որ աւելի լաւ լինի, հը...: Իւղը: Ի հար-
կէ իւղը. առանց դրան էլ կարելի է եօլա-

գնալ: Բայց եթէ յանկարծ ոչ թէ քսանու-
հինգ, այլ երեսուն կոպէկ տան կարածս
օձիքի համար և կամ նոյնիսկ երեսունու-
հինգ կոպէկ վճարեն...: Ախ, ի՛նչ լաւ կը
լինի: Իրաւ եթէ այդպէս պատահի, այն-ժա-
մանակ ի՛նչ առնեմ, որ աւելի լաւ լինի,
հը...: Այ, ինչ. ձուկը կ'առնեմ և ձկնաթան
կը պատրաստեմ. մայրիկս շատ է սիրում
այդ... ես էլ եմ սիրում...»:

Այդպէս ինքն իր հետ խօսելով Հռիփսոն
հառաւ շուկայ: Բայց ափսո՛ս, որ այդ հա-
րուստ ու շքեղ խանութներով շուկայում
ոչինչ չէին գնում, այլ միայն ծախում էին:

Հռիփսոն օձիքը ձեռքին երկար թա-
փառեց շուկայում. դէս գնաց, դէն գնաց,
շատերին առաջարկեց իր երկու օրուան աչ-
խատանքը, բայց ոչ-ոք չկամեցաւ տասը կո-
պէկից աւելի տալ:

Հէք աղջիկը էլի մի ամբողջ ժամ թա-
փառեց, բայց իզուր. օձիքն առնող չգրտ-
նուեց: Զատ ման-գալուց բոլորովին յոգնեց
ու այլևս չկարողանալով աչքերից գլորուող
արտասուքը պահել, հեռացաւ շուկայից:

Ինչպէս-որ նրանց տանից մօտիկ խա-
նութպանն էր, այնպէս էլ շուկայի մարդիկն

էին և դեռ մի բանով էլ աւելի: Ո՛չ-որ շու-
ղեց մտածել, որ երեխան քաղցած կը լինի.
Ո՛չ-որ չկամեցաւ մտնել անօգնական որբի
դրութեան մէջ, որպէսզի որևէ կերպով օգ-
նէր և կամ մի շնչին բանով ուրախացնէր
նրան...:

Ախ, ի՛նչպէս լաւ կը լինէր, եթէ ամենքն
էլ բարի լինէին և միայն իրանց մասին չմտա-
ծէին, այլ միքիչ էլ զրբ, խեղճ ու անօգնա-
կանների համար մտածէին, նրանց վրայ
հոգս քաշէին, որպէսզի նրանց համար էլ
կեանքը քաղցրանար, նրանց օրերն էլ ու-
րախ անցնէին:



7



Հէք աղջիկը տխուր-ու-տրտում,
սիրտը կոտրած, աչքերն արտասու-
քով լի, գլխակոր, քայլերն ուղղեց դէպի տուն:
Գծբաղդ երեխան չգիտէր ի՛նչ անելիքը:
Կորաւ ամեն ինչ՝ և՛ սիրելի մայրիկին
ուրախացնելու բաւականութիւնը, և՛ իր եր-
կու օրուան աշխատանքը, և՛ բոլոր, բոլոր
հրապուրիչ յայտերը... Խեղճ Հռիփսօ:

«Ախ... այժմ մայրիկս ի՛նչ պէտք է ա-
նի», անցաւ նրա մտքովը և նրա որդիական
սիրող սիրտը ճմլուեց:

Նա դեռ երբէք այդպէս տխուր չէր եղած:
«Բայց հօ չի՛ կարելի այսպէս դատար-

կաձեռն վերադառնալ տուն, — նորից սկսում է ինքն իր հետ խօսել: — Արդեօք չգնամ մեր տանտիրանց տնտեսուհու մօտ. նա բարի է, կարելի է օձիքն առնի»:

Տնտեսուհին լաւ էր ճանաչում փոքրիկ Հռիփսօին. թէ դուրսը — փողոցում և թէ խանութում պատահած ժամանակ միշտ քաղցրութեամբ բարևում, շոյում ու գովում էր, որ այդպէս լաւ, այդպէս աշխատասէր աղջիկ է. իսկ յաճախ էլ ասում էր նրա մօրը.

— Աստուած վկայ, տիկին Չողակաթ, բողբալսր ես, որ այդպէս աղջիկ ունես: Ասած է «ձուտը դեռ ձուիցը կ'երևայ, թէ ինչ է լինելու վերջը»: Երևում է որ ժամանակով այնպէս տնարար, այնպէս աշխատասէր ու մաքրասէր համեստ հարս պէտք է լինի աղջիկդ, որ ամեն տեսնող ողորմի տայ նրա ծնողին և երնէկ՝ ամուսնուն:

Մայրը լսում էր տնտեսուհու գովասանութիւնները իր մինուճարի մասին և մտքի մէջ շնորհակալ լինում Աստուածանից, որ այդպէս լաւ, այդպէս խելօք աղջիկ է պարգևել իրան:

Հռիփսօն տեղ հասնելով՝ քարէ սանդուխով արագ-արագ բարձրացաւ երրորդ յար-

կը, ուր խոհանոցն էր, ու կամաց բանալով դուռը, ներս մտաւ և մնաց դռան մօտ կանգնած:

— Ի՞նչ ես կամենում, հարցրեց խոհարարուհին:

— Տիկին Մարօին եմ ուզում, — պատասխանեց Հռիփսօն քաշուելով:

— Նա հիմա դուրս գնաց, բայց շուտ կը վերադառնայ, միքիչ սպասիր:

Հռիփսօն շուգեց օձիքը ցոյց տալ խոհարարուհուն, այլ անպատճառ տնտեսուհուն: Եւ որովհետեւ նա այդտեղ չէր, ինքն էլ լուռ սկսեց ուշադրութեամբ դիտել խոհանոցը:

Իսկ խոհանոցը այնպէս մեծ էր, այնպէս լոյս և տաք, որ նա շատ գոհ կը լինէր, եթէ իրանց կացարանը դրա կիսի շափ լոյս և կիսի-կիսի շափ էլ տաք լինէր:

Խոհանոցի մեծ լուսամտի առաջ լուացարարուհին ու աղախինը արդուկում էին լուացքը և իրար հետ քչփչում: Խոհարարուհու օգնական փոքրիկ տղան աթոռակի վրայ նստած՝ կանանչին էր մաքրում և մէկ-մէկ էլ գազարի կտորտանքից բերանը զցելով զրճզրճալէ ծամում: Իսկ ինքը խոհարարուհին բրինձն էր լուանում:

Կրակի վրայ դրած կոթաւորի մէջ ինչ-
որ բան էր թշթշում և մարդու ախորժակը
զրգուող հաճելի հոտ տարածում շուրջը:

Հռիփսոն երկար ժամանակ էր մտի համ-
չէր տեսել, իսկ երկու օր էր բերանը բան
չէր դրած, ուրեմն կարելի է երևակայել,
թէ ինչ կըզգար հէք որբը այդ ախորժելի
հոտի ազդեցութիւնից: Խեղճ երեխայի գոյ-
նը բոլորովին թուաւ. քաղցից ու յոգնածու-
թիւնից հազիւ էր կարողանում ոտքի վրայ
մնալ:

Վերջապէս եկաւ տնտեսուհին և գալուն
պէս վրդովուած դիմեց խոհարարուհուն.

—Ախ, Մարթա, քո պատճառով քանի-
քանի անգամ եմ յանդիմանութիւններ ստա-
ցել ազջիկ-պարոնից: Նա այսօր կրկին նկա-
տողութիւն արաւ, որ մենք բարիքի հետ
խնայողաբար վարուել չգիտենք:

Վրդովուած տնտեսուհին հէնց-որ նկա-
տեց Հռիփսօին, իսկոյն ուրախ դէմք ա-
ռաւ ու դիմեց նրան.

—Դ՞ն էս, Հռիփսիկ-ջան. ի՞նչ ես կա-
մենում, սիրելիս:

—Ծախում եմ այս օձիքը:

—Ո՞վ է կարել, դ՞ն թէ մայրիկդ:

—Ես եմ կարել, — անհամարձակ սլառաս-
խանեց Հռիփսօն:

—Մէկ տեսէք, անջկերք, թէ ինչպէս
ճաշակով է կարել: Ապրես դու, խելօք աղ-
ջիկ, շատ ապրես, գօրանաս: Ծաղիկներն էլ
ինչպէս սիրուն ու իրար նման են դուրս
եկել: Թող քեզանից օրինակ վերցնեն ու-
րիշները. քեզ պէս խելօք, քեզ պէս աշխա-
տասէր լինեն և իրանց մայրիկին չվշտացնեն:

Հռիփսօն ամաչելուց կարմրեց. նա զգում
էր, որ ինքը արժանի չէ այդքան գովասան-
քի: Չէ՞ որ ամեն մարդ պարտաւոր է իր
պարտականութիւնը կատարել. ինքն էլ միայն
իր պարտքն է կատարել՝ կամենալով իր
մայրիկին օգնել, միքիչ նրա ծանր բեռը
թեթևացնել:

Տնտեսուհին նորից ուշի-ուշով զննեց կա-
րած օձիքը և հարցրեց.

—Ո՞րքան ես պահանջում աշխատանքիդ
համար:

—Քսանուհինգ կոպէկ, — սլառասխանեց
Հռիփսօն անվճռաբար և նրա մտքովն անցաւ.
«Ախ, երանի՛ թէ առնի... նոյնիսկ էժան
կը տայի, միայն թէ անպատճառ առնի»:

—Քսանուհինգ կոպէ՛կ... ո՛ւհ, ի՛նչ թանգ

ես գնահատում. այդքանը ինչպէս պէտք է տանես,—կատակեց տնտեսուհին:—Դու լաւ աղջիկ ես, ես ուրախութեամբ կ'առնէի, որ աշխատանքդ վարձատրուած լինի, բայց ինչ արած որ այս ընդհանուր փող չունենամ: Ձեռքիս եղածը երէկ թողս եկաւ տարաւ, որ «Մայրենի լեզու» և վայելչագրութեան տետրակներ առնի:

«Ո՛չ, սա էլ առնողը չի. լաւն այն է գրնամ տուն», մտքումը վճռեց Հռիփսօն: Եւ այն է՝ ուզում էր հեռանալ, որ խոհանոցի դուռը լայն բացուեց և շէմքում երևաց մի քարձրահասակ ու մաքուր հագնուած կին:

Աղախինները,—որ գործները թողած, եկել-ժողովուել էին Հռիփսօի գլխին՝ օձիքը տեսնելու,—խսկոյն շտապեցին իրանց տեղերը: Եկողը տանտիկինն էր:

—Մարօ, մի՞թէ միշտ ինքս պէտք է գամ քո ետևից: Երբ մի բանի համար գնում ես, կարծես քեզ համար էլ վերադառնալ չկայ. շատ վատ սովորութիւն ունես,—յանդիմանեց նա տնտեսուհուն և մի հարցական հայեացք գցեց փոքրիկ աղջկայ վրայ:

Տնտեսուհին նկատեց տիկնոջ հայեացքը և շտապեց օգտուել այդ յաջող դէպքից:

—Տեսէք, աղջիկ-պարոն, թէ իր պատիկ տեղովը ինչպէս սիրուն օձիք է կարել:

—Դրան ո՞վ է ուղարկել այստեղ:

—Ո՛չ-ոք. ինքն է եկել, որ իր կարած օձիքը ծախի: Մեր բակումն են կենում, ներքին յարկի սենեակներից մէկում. մայր ու աղջիկ են, ուրիշ ոչ-ոք չունեն:

—Երևի մրգի փողը պակասել է,—կծու կերպով նկատեց տիկինը:

—Ի՛յ... ի՛նչ էք ասում, աղջիկ-պարոն, իսկի ուտելու հաց չունեն. օրերով մի պատառ հաց անգամ չեն դնում բերանները: Զմտ աղքատ են, աղջիկ-պարոն: Մայր ու աղջիկ ապրում են իրանց ձեռքի պտղունցով. բայց ի՛նչպէս են ապրում... վայ այն ապրելուն: Եթէ գիտենաք՝ ինչպիսի գրութեան մէջ են գտնվում, եթէ տեսնէք դրանց կացութիւնը, մեղքներդ կը գայ—կը խղահարուէք: Խեղճ մայրը ոչ-միայն ցերեկները, այլ համարեա ողջ գիշերներն էլ նստած՝ կար է անում, որպէսզի քաղցած չմնան: Բայց է ինչպէս երևում է, այդ ևս չի յաջողվում, որովհետև դարձեալ սարսափելի աղքատութեան մէջ են: Սրան շատ անգամ եմ տեսել մանրավաճառից բաներ գնելիս. սակայն

ինչ են լինում գնածները. միքանի գրվան-
քայ հաց և միքանի մսխալ թէյ, էլ ուրիշ
ոչինչ: Առանց շաքարի թէյն ի՞նչ պէտք է
լինի...: Ի՞նչ ասեմ, անգլիկ-պարոն, ճիշտ է,
շատ աղքատ են, բայց ազնիւ աղքատ են.
որքան կարողանում են, աշխատում են: Իսկ
ողորմութիւն երբէք չեն խնդրում, որովհետև
աւելի լաւ են համարում քաղցած ու պատ-
ուաւոր մնալ, քան մուրացկանութեամբ
ապրել, որ մահից էլ վատ է իրանց համար:

Թէև տեսեսուհին ցանկանում էր իր
անգլիկ-պարոնի գութը շարժել և նրան լաւ
տրամադրել դէպի Հռիփսօն, բայց ինչ կ'ա-
նես որ Հռիփսօն ամօթից մեռելի գոյն էր
ստացել. նա կը կամենար, որ գետինը պատ-
ուէր և իրան կուլ-տար: Հէք անգլիկայ աչ-
քերը լքցուել էին արտասուքով. նա հագիւ
էր կարողանում իրան պահել, որ լաց
չլինի:

Եթէ խեղճ երեխան իմանար, որ իրան
այդ էր սպասում խոհանոցում, ամենեկին չէր
գնալ այնտեղ:

Աղբատ: Իրանք ինչո՞ւ են աղքատ:

Աղբատները նրանք են, որոնք թէև ա-
ռողջ, բայց ազնիւ աշխատանքից փախչում

են, որոնք անլուայ, փնթի ձեռք ու երեսով,
զգզուած մագերով ու ցնցոտիներով թափա-
ռում են փողոցներում, առանց ամաչելու ձեռք
են մեկնում՝ ողորմութիւն խնդրում և դրանով
ապրում, իսկ հալալ աշխատանքից միշտ
փախուստ են տալիս:

Այո, աղքատները նրանք են, որոնք կա-
րող են, բայց չեն կամենում աշխատել. մինչ-
դեռ իր մայրիկը, փառք Աստուծոյ, աշխա-
տում է գիշեր ու ցերեկ, մի՛շտ:

— Եթէ այդպէս է, Մարօ, եթէ բոլորն
էլ ուղիղ է, ինչ-որ ասացիր, ուրեմն պէտք
է անպատճառ առնել օձիքը. արժի, որ ազ-
նիւ աշխատանքը վարձատրուի:

— Գինն ի՞նչ է, սճիկ, — տիկինը զիմեց
Հռիփսօին:

Հռիփսօն լուռ էր. նա անկարող էր
խօսել:

— Քսանուհինգ կոպէկ է ասում, անգլիկ-
պարոն, — նրա փոխարէն պատասխանեց տըն-
տեսուհին. — Ի հարկէ չնչին բան է, բայց
այդքանով էլ զո՞հ կը մնայ, միայն թէ աշ-
խատանքը վարձատրուի, որպէսզի քաղցած
չմնան:

Հէք անգլիկը այլևս չկարողացաւ իրան

պահել, այդ նրա ոյժից վեր էր. արտասուր-
ները գլորուեցին նրա աչքերից:

—Ինչո՞ւ ես լաց լինում, հոգիս, ես հօ
վատ բան չասացի: Սրբի՛ր աչքերդ և գնան
տիկնոջ ձեռքը համբուրիր:

Սակայն Հռիփսօն մնաց կանգնած իր
տեղում. նա կատաղած վագրի նման աչքե-
րով ուտում էր շրջապատողներին: Չատ զգա-
լի էր, շատ խորն էր ազդել նրա վրայ այն
վիրաւորանքը, որ հասցրին իրան ու իր
սիրելի մայրիկին:

Հռիփսօն շարունակում էր արտասուել:

—Լա՛ւ, չի ուզիլ. հարկաւոր չէ ձեռք համ-
բուրել: Ահա տո՛ւր իրան այս երեսուն կո-
պէկը, —ասաց տիկինը և փողը տալով տըն-
տեսուհուն, դուրս գնաց:

—Տեսա՛ր, Հռիփսիկ-ջան, Աստուած վար-
ձատրեց աշխատանքդ. քո պահանջած գնից
մի բան էլ աւելի ստացար:

—Քայց ինչո՞ւ աղքատ անուանեցիր մեզ,
—յուզուած ձայնով հարցրեց Հռիփսօն, որի
սրտին շատ էր զիպել այդ բառը:

—Այ դու մեծսրտանի...: Տեսնո՞ւմ էք՝
ինչ հպարտն է եղել:

—Այո, քանի-որ մենք ծոյլ չենք. այլ

եւ էլ ու մայրիկս էլ միշտ աշխատում ենք,
էլ ինչո՞ւ ենք աղքատ:

—Ա՛ռ, լաւ, ա՛ռ փողը: Ես հօ վատ մըտ-
քով չասացի:

Հռիփսօն առաւ իր աշխատանքի վարձը
և շտապեց հեռանալ:

—Իմ կողմից ողջունիր մայրիկիդ, —նրա
ետեկից ձայն տուաւ տնտեսուհին:

Սակայն տնտեսուհու վերջին խօսքերը
համարեա անլսելի մնացին, որովհետեւ Հռիփ-
սօի միտքն ամբողջովին զբաղուած էր նրա-
նով, որ բոպէ առաջ հեռանայ, ազատուի
այնտեղից, ուր համբերեց այնքան վիրաւո-
րանքի և տարաւ այնքան նախատինք:

Այդ տեսակ օգնութիւնը զիպել էր նրա
սրտին: Հազար անգամ աւելի լաւ կը լինէր,
եթէ բոլորովին չօգնէին, քան այդ ձևով
օգնէին:

էլ ի՛նչ լաւութիւն, էլ ի՛նչ օգնութիւն,
եթէ արածները պէտք է քթիցը հանէին՝ ե-
րեսովը տալով ու այնքան վիրաւորանքներ
հասցնելով:

Հռիփսօն միայն այն-ժամանակ ազատ
շունչ քաշեց, երբ արդէն փողոցումն էր զտըն-
վում: Երբ յետ նայեց ու տեսաւ որ ո՛չ-ոք

չկայ, բոլորովին հանգստացաւ և կրկին անձ-
նատուր եղաւ իր հրապուրիչ մտքերին:

«Այժմ ես կարող եմ մայրիկիս ուզած-
ներն առնել», մտածեց նա:

Եւ նա այդ մտքից այնպէս ուրախացաւ,
որ մոռացաւ թէ յոգնածութիւնը և թէ ստա-
ցած վիրաւորանքները:

«Զ՛նւտ, շ՛նւտ մայրիկիս գնամ»:

Եւ Հռիփսօն նետի պէս սլացաւ ու տուն
հասնելուն պէս վազեց մօր վզովը փարուեց:

— Ծախեցի՛ր, մայրիկ-ջան, ծախեցի՛ր...:
Երեսուն կոպէկ տուին...: Չե՞ս հաւատում,
ահա՛, տես, ա՛ռ, ինքդ համարիր: Ճիշտ երե-
սուն կոպէկ է:

Մայրը ծիծաղեց ու հետն էլ լաց եղաւ
սաստիկ յուզուելուց:

— Մեր տանտիրուհին առաւ, — բլբլացրեց
Հռիփսօն. — նա այնպէս մաքուր էր հագ-
նուած և այնպէս սիգաճեմ էր, որ կարծես
իրանց պարտէզի սիրամարգը լինէր...: Ախ,
մօրքան մաքուր էր նրա հագուստը: Բայց և
մօրքան զգուելի էր նրանց տնտեսուհի Մա-
րօն: Նա տիկնոջն ասաց, որ իբր թէ մենք
աղքատ ենք: Մայրիկ-ջան, չէ՞ որ մենք աղ-
քատ չենք, այնպէս չէ՞:

— Ի հարկէ, հոգիս. ճիշտ է՛ խնդ՛ ենք,
բայց աղքատ չենք: Աղքատը նա է, ով ծոյլ
է և հալալ աշխատանքից փախչում է. ով
առողջ է, բայց չի կամենում աշխատել, այլ
մուրացկանութեամբ է գլուխը պահում.
Կամ նա է աղքատ, ով տկար է և ապրելու
միջոց չունի, իսկ աշխատելն էլ իր ոյժից
վեր է, — հանգստացրեց աղջկան հոգատար
մայրը:

— Սակայն ինչո՞ւ շուկայում չծախեցիր
ձեռագործդ, չէ՞ որ դու այդ գիտաւորու-
թեամբ գնացիր այնպէս վաղ-վաղ: Ինչո՞ւ
էիր գնացել տանտիրանց տուն, — հարցրեց
մայրը:

— Հապա ի՞նչ անէի, շուկայում շատ քիչ
էին տալիս: Ես ամբողջ երկու օր նստած
չարունակ աշխատում էի, այն-ինչ տասը
կոպէկից աւելի տուող չեղաւ: Այդքանով չու-
զեցի տալ ու հեռացայ շուկայից: Սիրտս
սաստիկ ճմլուեց, երբ տեսայ թէ չպէտք է
կարողանայի մեզ համար անհրաժեշտ բա-
ներն առնել: Այդպէս սիրտս կոտրած վերա-
դառնում էի տուն: Տանտիրանց դռնից անց-
նելիս միտքս ընկաւ նրանց տնտեսուհին:
Կարելի է թէ նա առնի, մտածեցի ու գնա-

ցի: Սակայն տնտեսուհու փոխարէն տանտիրուհին առաւ: Աւելի ստացածս հինգ կոպէկով ձուկը կ'առնեմ և ձկնաթան կը պատրաստեմ, այդ քո սիրած կերակուրն է. իսկ հիմա գնամ խանութ, մայրիկ-ջան:

—Յոգնած ես, արևդ սիրի մայրիկդ. միքիչ հանգստացիր, յետոյ գնա. այդպէս շտապելու ի՞նչ կարիք կայ:

—Ո՛չ, մայրիկ-ջան, ես չեմ յոգնել: Թո՛ղ գնամ հարկաւոր բաները բերեմ: Այսօր մենք օրինաւոր թէյ կը խմենք. իսկ թէյից յետոյ կ'երթամ գետեզրը՝ ձուկն առնելու. այնտեղ ձուկը թէ՛ թարմ է և թէ՛ աւելի էժան: Մօտիկ ձկնավաճառները թանգ են տալիս, տուածներն էլ՝ շատ անգամ հոտած է լինում,—շտապ-շտապ վրայ տուաւ Հռիփսօն ու գնաց դէպի խանութ:

—Խանութում ուրիշ յաճախորդներ կային: Հռիփսօն սպասեց մինչև նրանց գնալը և կարծելով թէ ամենքն էլ արդէն գնացին ու ինքը մենակ է, մօտեցաւ դազգեահին ու ասաց.

—Խնդրեմ՝ երեք գրուանքայ հաց, քառորդ գրուանքայ շաքար և մէկուկէս լօտ էլ թէյ տաք. միայն թէ շուտ, յատուկ խնդրում

եմ, շատ եմ շտապում,—թախանձեց Հռիփսօն:

Խանութպանը աչքի տակով նայեց նրան և լուռումունջ, Հռիփսօի ետևը կանգնած կնոջ համար սկսեց բան կշռել:

Հռիփսօն կրկնեց իր խնդիրքը: Եւ երբ խանութպանը էլի տէրը չեղաւ—չիմանալու դրաւ, այն-ժամանակ յաճախորդ կինը, որին չէր նկատել Հռիփսօն, լուրջ կերպով նկատեց խանութպանին.

—Նա փոքր է, դեռ առաջ նրան ճամբու դիր:

Խանութպանը թէև ակամայ բայց-և-այնպէս կշռեց Հռիփսօի ուղածները:

—Ո՞րքան պէտք է վճարեմ, ծանր կերպով ասաց Հռիփսօն:

—Տասնուիններ կոպէկ:

Հռիփսօն ձեռքի քսան կոպէկանոցը տուաւ խանութպանին, յետ ստացաւ մի կոպէկն ու ծոխի պէս թուաւ դէպի տուն:





Ե



Օրինաւոր, այսինքն հացով ու շաքարով թէյ խմելուց յետոյ, Հռիփսոն հացի միջուկից մի կտոր վերցրեց ու վազեց կատուի մօտ:

«Չատ է սոված, ուրեմն ցամաք հացն էլ կ'ուտի», մտածում էր նա գնալիս:

Կատուն պառկած էր և հազիւ հազ էր շունչ քաշում ու ծանր նրւվում—շատ կամաց մլաւում:

Հռիփսոն շօքեց նրա կողքին, ցաւակցութեամբ նայեց նրան ու ձեռքի հացը մօտեցրեց:

—Փիսօ, անձ քեզ համար հաց եմ բերել: Երեկուայ բերածս շատ չոր էր, երևի նրա համար չես կերել. իսկ այս փափուկ է: Գէ, վեր կաց, որ ուտես, է: Չէս ուզում...: Չես հաւանում, հա՛ն: Սակայն ես ու մայրիկս մեծ ախորժակով կերանք, այն-ինչ դու չես հաւանում: Եթէ այդպէս է, ուրեմն միքիչ էլ պէտք է սպասես, մինչև գնամ ձուկն առնեմ-բերեմ. այդ հօ կատուներիդ սիրած բանն է:

Եւ նա թողեց կատուին ու վերադարձաւ տուն, վերցրեց մի փոքրիկ սակառիկ և ուզեց գնալ:

—Ո՛ւր այդպէս, Հռիփսիկ,—հարցրեց մայրը:

—Գետեզրը ձկի:

—Ի՞նչ հարկ կայ այդքան հեռու գնալու, հոգիս, աւելի լաւ է մօտիկ տեղից առնես:

—Ո՛չ, մայրիկ-ջան. արդէն ասացի, որ մօտիկ եղածները թէ թանգ են և թէ հօտած,—ասաց ու դուրս գնաց:

Գնալիս նա այնպէս զբաղուած էր իր մտքերով, որ չիմացաւ թէ ինչպէս տեղ հասաւ:

—Ի՞նչ ես մարդու ոտքի տակն ընկ-

նում: Չլինի՞ թէ ուզում էիր ջուրն ընկնել, որ չես նայում առջևդ:

Փոքրիկ աղջիկն այդ ձայնից սթափուելով երբ աչքերը բարձրացրեց, տեսաւ որ՝ իրաւ արդէն տեղ է հասել:

—Ես... ես ինչո՞ւ պէտք է ջուրն ընկնեմ. յիմարներն են դիտմամբ ջուրն ընկնում, որ խեղդուեն, իսկ ես յիմար չեմ: Ես եկել եմ ձուկն առնեմ,—պատասխանեց չըռիփսօն շփոթուած ու... միքիչ էլ վիրաւորուած:

—Փող ունե՞ս,—կասկածանքով հարցրեց ձկնավաճառը իր փոքրիկ յաճախորդին, որի հագի բարակ շորերը հազիւ էին նրան պաշտպանում սաստիկ ցրտից, որի ոտերի բթամատերը դուրս էին եկել կօշիկներից, իսկ քիթ ու սրունքը բոլորովին կարմրել, ձեռքերը կապտել էին:

—Ի հարկէ որ ունեմ, հապա հօ անփող չեմ ուզում. աղքատ հօ չեմ, որ այդպէս բան անեմ:

—Լա՛ւ, էլ ինչո՞ւ այդպէս շուտ վիրաւորուեցիր: Եթէ այդպէս է, եթէ փող ունես, մօտ բեր սակառիկդ:

—Ո՛չ, դեռ ասան, թէ՞ հատը քանխո՞վ ես

տալիս...: Ներողութիւն, ուզում եմ ասել՝ տասնեակը ո՞րքան արժի: Դեռ այդ ասա, յետոյ,—ասաց Հռիփսօն և մի-երկու քայլ յետ գնաց:

—Էլ ի՞նչ ես ետ-ետ գնում. բեր, մօտեցրո՛ւ սակառիկդ: Նոր հօ աւելի չեմ առնելու քեզանից. ինչքան որ ուրիշներից եմ վերցնում, այնքան էլ քեզանից կ'առնեմ, այսինքն տասը հատին երեք կոպէկ:

—Ի՛նչ ես ասում, ի՛նչ ես ասում,—վախեցաւ խեղճ աղճիկը.—տասնեակը 3 կոպէկ... թանկ է: Այդ գնով հօ մեր տանից մօտիկ ձկնավաճառներն են ծախում: Եթէ այդ էր, այդ, էլ ինչո՞ւ էի այսպէս ցրտին ցեխ կոխ տալով զալիս այստեղ: Ես կարծեցի այստեղ աւելի էժան կը լինի: Տասը հատը 2 կոպէկով եթէ կը տաս, մի-երեք տասնեակ համարիր:

Ձկնավաճառը հիացած մնաց նրա այդպէս աչքաբացութիւնից:

—Լա՛ւ, թո՞ղ քո ասածը լինի: Դէ, բեր, մօտ բեր սակառիկդ:

Հռիփսօն սակառիկը մօտեցրեց, իսկ ձրկնավաճառը զոյգ-զոյգ 3 տասնեակ համարելուց յետոյ հարցրեց:

—Ինչքան ասացի՜ր. հի՛նգ թէ վեց տասնեակ:

—Իմ ինչի՞ս է այդքանը. ես Յ տասնեակ ասացի:

—էժան է, խելք ունես, շատ առ: Հը՛, համարե՞մ էլի մի տասը հատ:

—Ինձ համար Յ տասնեակն էլ շատ է: Նա երկիրդ էր կրում, թէ մի գուցէ փողը չբաւականանայ ամեն բան առնելու:

—Ասում եմ՝ էլի առ. լաւն է և էժան: Մէկ տես, թէ ինչպէս են խլպլտում, կարծես իրանք են ուզում սակառիկիդ մէջն ընկնել,—ասաց ձկնավաճառը և չսպասելով նրա համաձայնութեան, տասը հատ էլ համարեց:

Այս անգամ Հռիփսօն էլ բան չասաց, իրան մխիթարելով այն մտքից, թէ միւս բաներն արդէն առել-պրծել է: Բացի գրանից զեռ 3 կոպէկ էլ մնում էր. իսկ վաղն էլ մայրը իր ձեռքի կարի համար պէտք է ստանար, ուրեմն առ-այժմս փողի անհրաժեշտ կարիք շատ չէր լինելու:

—Ի՛է, տուր տեսնեմ գրամագլուխը,— կատակով ասաց ձկնավաճառը՝ ձեռքերը գոգնոցով սրբելով:

Հռիփսօն գրպանից հանեց տասը կոպէկանոցը և տուաւ նրան:

—Թո՛ղ այդպէս լինի,—ասաց ձկնավաճառը՝ գրամները ձեռքի մէջ խաղացնելով: Խեղճ երեխայի թուքը ցամաքեց, այնպէս սաստիկ վախեցաւ:

—Ի՛նչպէս թէ՛ թո՛ղ այդպէս լինի: 2Է՞ որ քեզ երկու 5-կոպէկանոց տուի: Տուածդ ձուկը ո՞րքան արժի,—հարցրեց Հռիփսիկն ու սկսեց հաշուել մատերի վրայ:

—է՛, դու է՛լ...: Ձուկը 4 տասնեակ է, իւրաքանչիւր տասնեակն արժի 2 կոպէկ, ուրեմն ընդամենն արժի ութ կոպէկ, մինչդեռ քեզ 2 հինգ-կոպէկանոց տուի, այսինքն՝ 10 կոպէկ:

—Ապրես, շատ ճիշտ հաշուեցիր:

—Ուրե՛մն:

—Ա՛խ, դու աւելորդը յետ ես ուզում, հա՛:

—Ի հարկէ. 2 կոպէկ պէտք է յետ տաս:

—Ահա՛ քո երկու կոպէկը, սիրելիս, ա՛ռ: Ես կատակ արի. միայն ուզում էի իմանալ, թէ հաշուել էլ զիտե՞ս: Կեցցես, քաջ մնացիր, շշփոթուեցիր. շատ ապրես, որ այդպէս աչքաբաց ես:

Հռիփսօն փողն առաւ, խնամքով դրսւ գրպանը, սակառիկի ծածկոցը վրայ քաշեց, ամրացրեց ու շտապեց տուն:

«Փնօք Աստուծոյ, ինչ-որ պէտք է և ամենից անհրաժեշտը՝ գնել-պրծել եմ: Ըուտ գնամ և մի այնպիսի ձկնաթան պատրաստեմ, որ մայրիկիս քէֆը գայ: Այսօրուայ համար երկու տասնեակը բաւական է, միւսը կը պահեմ վաղուայ համար», մտքի մէջ ինքն իր հետ խօսում էր նա և շտապում:

Գեռ չհասած կամրջին, նա տեսաւ որ խաշած թոք են ծախում:


Եւ նա կանգ առաւ մտածման մէջ:

«Այ թէ իմ հիւանդ կատուն ինչ կ'ուտէր ախորժակով: Կատուները մսեղէն աւելի են սիրում, իսկ թոքն էլ միս է: Երեք կոպէկ էլի ունեմ...: Հը՞, արդեօք չառնեմ», ինքն-իրան հարց տուաւ Հռիփսօն ու առանց երկար մտածելու, գնեց թոքից և գոհ սրտով շարունակեց ճանապարհը:

Երբեմն նա կանգ էր առնում, բաց անում թուղթը, որի մէջ փաթաթած էր թոքը, երկար նայում էր վրան ու հոտ քաշում: Միրտն ուզում էր՝ քիչ էլ է ուտել, լոկ համր տեսնել: Բայց երբ մտածում էր որ ինքը

յատկապէս կատուի համար է առել, ուրեմն իրանը չէ, այլ ուրիշին է պատկանում, հետեապէս ինքն իրաւունք չունի ուտելու, իսկոյն իրան զսպում—իրան պահում էր և այլևս չէր հրապուրվում ուտելու:

Ահա այդպէս խելօք ու հաստատ կամքի տէր էր Հռիփսօն:





այրը անհամբերութեամբ շարունակ դռանն էր նայում և շատ էր զարմանում աղջկայ ուշանալու վրայ:

Նա արդէն սկսել էր անհանգստանալ:

Վերջապէս Հռիփսօն՝ ցրտից սառած ու կապտած ներս մտաւ խոհանոց, սակառիկը դրաւ սեղանի վրայ ու ձայն տուաւ.

—Մայրիկ, եկայ:

Ասաց ու վերցնելով թոքը, վազեց մարագ կատուի մօտ:

—Փիսօ, մէկ տես, թէ ի՞նչ եմ բերել քեզ համար, որ ուտես:

Եւ նա թոքի կտորը մօտեցրեց կատուի դնչին:

—Թէև ինքս էլ քաղցած էի և սիրտս շատ էր ուզում զոնէ համր տեսնել, բայց չկերայ, այլ քեզ համար բերի, որ ուտես, կազդուրուես, որպէսզի շուտով բուրբուկին առողջանաս և մենք իրար հետ խաղանք, վազվզենք: Դէ, վեր կաց, է՛, փիսօ-ջան. վեր կաց, կեր. շատ քաղցած մնալը լաւ չէ:

Բայց կատուի դրութիւնն այնպէս վատ էր, որ նա բերած թոքի վրայ մինչև անգամ չնայեց էլ:

—Դէ, շատ քաղցած մնալը լաւ չէ. ասում եմ, է՛: Կեր, փիսօ-ջան, կեր. կեր որ շուտով առողջանաս:

Սակայն բարեսիրտ աղջկայ խօսքերն ու փաղաքշանքներն էլ չօգնեցին. կատուն մրնաց նոյն դրութեան մէջ. նա հազիւ էր շնչում:

«Զարմանալի է որ թոք էլ չի ուտում», ինքնիրան մտմտաց աղջիկը և ենթադրելով որ կատուն յետոյ էլ կ'ուտի, վերադարձաւ տուն և սկսեց ճաշի պատրաստութիւն տեսնել:

Երբ մայր ու աղջիկ՝ արդէն սեղան նրստած ճաշում էին, արժէր տեսնել աղջկան,

Թէ ինչպէս էր հիւրասիրում մօրը, ինչ
բաւականութեամբ էր խոշոր ու լաւ-լաւ
կտորները նրան հրամցնում:

—Ո՛չ, ո՛չ, մայրիկ-ջան, այս ինձ բաւա-
կան է. դու կեր: Այս կտորը թէ գէր է և
թէ համով, անպատճառ դու պէտք է ու-
տես, եթէ ոչ, կը բարկանամ,— ժպտալով ա-
սում էր նա և անուշ կրկնում— ծիծաղում:

Տիկին Չողակաթը ժպտում էր ներ-
քին բաւականութիւնից և շոյում աղջկայ
գլուխը:

—Ախ, մայրիկ-ջան, եթէ կարողանայինք
ամեն օր այսպէս ճաշել, ինչ լաւ կը լինէր...:
Այո, ուղիղն եմ ասում, շատ լաւ կը լինէր...:
Երբեմն քո կարածի փողով, երբեմն էլ իմ
կարածի: Միայն ծախելը դժուար է... Ինչ,
ինչպէս դժուար է: Չատ քիչ են վճարում:
Ախար ես երկու օր շարունակ աշխատում
էի, իսկ կուշտ պէտք է լինենք միայն մի
օր: Տնտեսուհու մօտ ես այլևս չեմ գնալ.
վշտացած եմ նրանից. ես բարկացած եմ
նրա վրայ:

—Ո՛չ, հոգիս, լաւ չէ այդպէս խիստ լի-
նել. չէ՞-որ նա քեզ վնաս չի տուել:

—Բայց նա ինձ վիրաւորեց, անպատ-

ուեց՝ մեզ աղքատ անուանելով, մինչդեռ
մենք աղքատ չենք, քանի-որ կարողանում
ենք աշխատել և երբէք չենք ծուլանում:
Միւս անգամ աւելի լաւ կը համարեմ էժան
տալ ուրիշներին, քան-թէ թանգ ու այդ-
պէսներին, որ իրանց արած լաւութիւնը
մարդու երեսովն են տալիս կոպտաբար: Ե-
թէ չեն ուզում լաւութիւն անել, թող չա-
նեն, ազատ են, ոչ-ոք իրանց չի ստիպում.
Իսկ եթէ անում են, թող մարդու շանպատ-
ուեն՝ արածնին երեսովը տալով:

—Մոռացիր, կեանքդ սիրեմ ես, մոռա-
ցիր այդ անախորժ բաները: Յիշաչար լի-
նելը լաւ չէ. պէտք է մարդ աշխատի անյի-
շաչար լինել:

—Այո, բայց այդպիսի վիրաւորանքներ
մոռանալը հեշտ չէ, մայրիկ-ջան:

—Բայց-և-այնպէս պէտք է աշխատել
անյիշաչար լինել:

—Լաւ, մայրիկ-ջան, կ'աշխատեմ. թէպէտ
չեմ կարծում որ կարողանամ մոռանալ. որով-
հետեւ կան բաներ, որ անկարելի է մոռա-
նալ... Լաւ, լաւ, այսուհետեւ այլևս չեմ խօ-
սիլ այդ մասին:

—Եւ լաւ կ'անես, հոգիս, —ասում է մայրը

և կամենալով աղջկայ ուշադրութիւնը բոլորովին ուրիշ բանի վրայ դարձնել, հարցնում է.

— Գետեզրը գնացիր, ի՞նչ տեսար:

— Մայրիկ-ջան, այնտեղ այնպէս լաւ է:

Առագաստաւոր նաւեր ու անագին շոգենաւեր շարունակ երթնեկում են: Այսօր շուկայի օր լինելով, նաւակով զբօսնողներ շատ կային: Ի՞նչպէս լաւ էր, մայրիկ-ջան: Նաւակները այնպէս հանդարտ սահում էին գետի վրայից, որ կարծես անագին կարապներ էին սորոր տալիս ջրի վրայ...: Է՛հ, բան չկայ, Աստուած ողորմած է, մէկ օր էլ ես ու զու կը զբօսնենք նաւակով, — շողակրատում էր Հոփիսօն և շարունակ մօրը յորդորում ուտելու:

— Իմ սիրունիկ շողակրատ, ես բոլորովին կշտացայ...: Փնօք Քեզ, Աստուած, — ասաց մայրը և երեսը խաշակնքեց. ասպա դիմելով աղջկան.

— Աղջիկս, քեզանից էլ շնորհակալ եմ ճաշիդ համար, քո սեպհական վաստակով պատրաստածդ ճաշի համար, — ասաց ու համբուրեց աղջկայ ճակատը:

Իսկ աղջիկն իսկոյն վրայ ընկաւ, փաթաթուեց մօր վզովն ու համբոյրներով ծածկեց երեսը:

— Ի՞նչպէս, ի՞նչպէս սիրում եմ քեզ, մայրիկ-ջան:

— Ան՞ուշ գաւակս, — բացականչեց մայրը և խանդազատանքով կրծքին սեղմեց աղջկան:

Մայրը նորից շնորհակալ եղաւ Աստուածանից՝ այդպէս խելօք, այդպէս բարի գաւակ ունենալու համար:





Է



Իրկնադէմ Հռիփսօն կրկին գնաց մարագ՝ կատուին ակր տալու:

Բայց այլևս կատու չկար. նա փէտացելանշնչացել էր: Թռքի կտորները ընկած էին նրա մօտ նոյն դրութեամբ, ինչպէս-որ թողել էր Հռիփսօն:

Խեղճ աղջիկը շատ տխրեց: Ինչ-որ կարող էր անել, արաւ, բայց ոչ մի բան չօգնեց: Երևի հիւանդութիւնն անբուժելի էր:

Հռիփսօն կատուի գէշը գուրս տարաւ փայտարանից, գաւթի ետևը մի փոս փորեց, գցեց մէջը, հողով ծածկեց ու՝ սիրտը կտորած, տխուր-ու-տրտում վերադարձաւ տուն:

Արդէն ճրագվառոցի ժամանակն էր: Մայրը աղջկան տեսնելուն պէս հարցրեց.
— Ո՞րտեղ ես գրել նաւթը, Հռիփսիկ. ինչքան ման եկայ, չգտայ:

«Նաւթը», մեքենայաբար կրկնեց մտքի մէջ Հռիփսօն:

Նա բոլորովին մտահան էր արել, չնայելով մօր կրկնակի պատուէրին: Հիմա ինչ պէտք է անեն միժան մէջ. չէ՞-որ մայրը ձեռքի կարը պէտք է վերջացնէր այդ երեկոյ:

Չէք աղջիկը՝ աչքերը լայն բացած և ինչպէս արձան մնաց շէմքի մէջ կանգնած:

— Քեզ հետ չե՞մ, աղջի: Չճառ արա, բեր, հոգիս...: Վսւիյ, ինչո՞ւ ես այդպէս սուս կացել ու մնացել կանգնած...: Մխ, չլինի՞ թէ մոռացել ես, — անհանգստութեամբ հարցրեց մայրը:

— Այո՛, մայրիկ, մոռացել եմ, — հազիւ լսելի ձայնով ասաց խեղճ երեխան և սիրտը սաստիկ ցաւ զգաց, որ իր սիրելի մայրիկի պատուէրը մոռացել էր կատարելու:

— Հիմա ես ինչ հողը տամ գլխիս...: Մխ, Հռիփսիկ, մի՞թէ չգիտէիր, որ վաղը ձեռքիս կարը տանելու օրն է:

Հռիփսոն լուռ էր: Այդ ցաւին զարման
անելը նրա ոյժից շատ վեր էր:

Աղջկայ այգպէս լուռ մնալը անհանգստա-
ցրեց մօրը: Նա գնաց նրա մօտ և ձեռքը
գնելով ուսին՝ քնքշաբար ասաց.

—Այգպէս մի տխրիր, կեանքդ սիրեմ.
Ինչ օգուտ եղած-պրծած բանի համար այգ-
պէս ցաւելուց...: Վայ, այդ լացն ինչացու է:
Սրբի՛ր, հոգիս, սրբի՛ր աչքերդ և գնան խա-
նութ, նաւթ բեր:

—Ի՞նչպէս կարող եմ գնալ խանութ,
քանի-որ ձեռքիս բոլոր փողը ծախսել եմ:

—Ի՞նչ արած, պէտք է էլի ապառիկ
բերել:

—Ախ, մայրիկ...:

Աղջկայ այդ անկեղծ բացականչութեան
մէջ այնքան աղաչանք կար, այնքան դառն
յուշաբերութիւն, որ զժբաղդ մայրը միանգա-
մից հասկացաւ, թէ այժմ որչափ դժուար է
իր երեխայի համար խանութ գնալ ու ապա-
ռիկ բան բերելը: Ուստի էլ շտիպեց նրան,
այլ շալը վերցրեց և ինքը գնաց նաւթի:

Տիկին Ըողակաթը երբ վերադարձաւ,
սենեակում ամեն ինչ հանդարտ էր. լսվում
էր միայն մանկական միահա-
լասար շնչառութեան ձայնը:

—Հռիփսօ,—ձայն տուաւ
մայրը, բայց պատասխան
չստացաւ:

«Երեւի քնել է»,—մտածեց
մայրը:

Երեխան շատ էր փոքր.
Նա չէր կարող դիմանալ այն-
քան հոգեկան յուզումներին.
ուստի մօր դուրս գնալուն
պէս գնաց-պառկեց. և որով-
հետեւ շատ էր յոգնած, գը-
լուխը բարձին գնելն ու
քունը տանելը մէկ եղաւ:

Ըողակաթը ձեռքը պահե-
լով վառած լուցկու առաջ,
որ չհանգչի, զգուշութեամբ մօտեցաւ Հը-
ռիփսօին:

Իսկ Հռիփսօն քնած էր քաղցր և իր հասա-
կին միայն յատուկ խաղաղ, անզոր քնով:

«Քնիր, աչքիս լոյս... քնիր, իմ անգին,
իմ խելօք աղջիկ: Այսօր դու շատ տրորուե-



Հռիփսօն քնած է:

ԻՄ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՓՈՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

1. Փայտաէն խճրից մինչև սպիտակ տուրք, պատկերազարդ, ամեն հասակի համար (սպառուած):		
2. Տրի՛նտօ՛ դիւցազն, պատկերազարդ, ամեն հասակի համար (սպառուած):		
3. Աչխացարը և նրանից եկու մնարու միջոցները, զինուորների համար (սպառուած):	} Հրատ. գնդապետ Աղէքսանդր Մե- լք-Հայկազեանի:	
4. Ձինական եղինցի մեակուրիներ (սպ.):		
5. Բարակացաւ քոֆալս (Հրատ. Կով. Կայս. Բժ. Ընկերութ.)		
6. Տրեֆ վիպիկ.—ա. Մայրական սիրտ, բ. Առանձին, գ. Վրէժ, երիտասարդների համար (սպառուած):		
7. Գիւղական վարժուէի, ժողովրդական, զինն է	25 կ.	
8. Անրեւոյք եղազործ, ըստ Չ. Դարվինի, պատկերազարդ, ամեն հասակի համար	7 կ.	
9. Վրէժ, Գի դը-Մօպսանի, և Հիւանդապահ աղջիկը, Ֆր. Կօպպէի, ժողովրդական	5 կ.	
10. Երկրաւոր և երաբղխային լեռներ, ժողովրդական	10 կ.	
11. Բնի և ձուի որս, մանկական	5 կ.	
12. Անդարդ Հանէսը	40 կ.	
13. Կարէնն ու Մանէնը	} մանկական, բոլորն էլ չբեղ պատկերներով	
14. Եօրն ազուս		
15. Պասիկ ու ձսիկ	40 կ.	
16. Խժուղներ, պատկերազարդ, ամեն հասակի համար	50 կ.	
17. Իգնատիոս Լոյոլա (իր պատկերով), ժողովրդական	30 կ.	
18. Վարժապետը, ժողովրդական (սպառուած):		
19. Տրիքի, զրամա 4 արարուածով	25 կ.	
20. Ոգեհարցութիւն, խատերգ. 3 արար.	50 կ.	
21. Նապաստակ Խէչանի վրէժխնդրութիւնը կամ Խնէղ Բեզ օգնիր, զրոյց, պատկերազ.	} մանկական	
22. Փոփրիկ Յարակն ու Խլրօիկ նապաստակը, զրոյց, պատկերազարդ		75 կ.
23. Առաջին վասակ, զրոյց, պատկերազարդ		1 ս. 60 կ.

Վերոյիշեալ գրքերից ձեռք բերելու համար պէտք է դիմել Թիֆլիզ, «ԳՈՒՏ-ՏԵՄԷԻՐԿ» գրականութանոց, կամ ինձ՝ *Тифлис, Орбелиан. ул. № 24.*
Левону Вардани МеликЪ-АдамянЪ

891.715
 U-38